Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի տնօրեն, իրավաբանական գիտությունների
թեկնածու՝ Լ. Ա. Դանգանչյան
_____
30. ____. 2020թ.

Առաջատար կազմակերպության կարծիքը

Մախով Ալիմ Ռուսլանի

<<Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների ղեկավարների սահմանադրաիրավական պատասխանատվությունը>> թեմայիով ԺԲ.00.02 <<Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում>> թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների ղեկավարների սահմանադրաիրավական պատասխանատվության հիմնախնդրի համալիր ուսումնասիրությանը:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է կառավարման ոլորտում օրինականության, այդ թվում սահմանադրական օրինականության ապահովման և պաշտոնատար անձանց կարգապահության բարձրացման անհրաժեշտությամբ: Այս առումով, նշենք, որ կայուն ու արդյունավետ կառավարման համակարգի ապահովումը Ռուսաստանի Դաշնային պետության պայմաններում, ինչպես իրավացիորեն նշում է ատենախոսության հեղինակը, ենթադրում է առնվազն երկու անհրաժեշտ պայմանների իրականացում. առաջին՝ կենտրոնացված իշխանության և նրա սուբյեկտների միջև փոխգործակցության սահմանադրաիրավական կառուցակարգերի հավասարակշռում, տարածքային իշխանության կառույցների վրա դաշնային իշխանության կողմից ներկայացնելու այնպիսի գործիքակազմ, որը հնարավորություն կտա մի կողմից՝ իրականացնել օրինականության ռեժիմի ապահովումը, պետության իրավական միասնականության և իրավական անվտանգության ամրապնդումը, մյուս կողմից՝ նպաստելու դաշնային սուբյեկտների իշխանական մարմինների անկախությանը՝ նրանց բացառիկ

իրավասության ներքո գտնվող ոլորտում, ինչպես նաև համատեղ իրավասության ներքո գտնվող ոլորտներում դաշնության և իր սուբյեկտների շահերի ներդաշնակությունը:

Բացի դրանից, իշխանությունների բաժանման և հավասարաշռման տարածքային կառուցակարգերում դաշնային սուբյեկտների մակարդակով զսպումների և հակակշիռների բալանսավորված այնպիսի համակարգի կառուցումը, որը հնարավորություն կտա դաշնային սուբյեկտների պետական իշխանության բարձրագույն մարմիններին՝ իրենց գործառությունները իրականացնելիս խուսափել այնպիսի իրավիճակներից, որոնք կպահանջեն միջամտություն դաշնային կենտրոնի կողմից և վիճելի ու կոնֆլիկտային իրավիճակնեիրի լուծման գործընթացի տեղափոխումը դաշնային մակարդակ:

Քննարկվող աշխատանքի նպատակն է՝ ՌԴ սուբյեկտների բարձրագույն պաշտոնատար անձանց /ղեկավարների/ սահմանադրաիրավական պատասխանատվության հետ կապված համալիր հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

Գրախոսվող հետազոտության գիտական նորույթն արտահայտված է աշխատանքի եզրահանգումներում, տեսական հետևություններում և գործող օրենսդրության կատարելագործմանն ուղղված գործնական առաջարկություններում:

Քննարկվող հետազոտության տեսական և գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում տեղ գտած տեսական եզրահանգումները և հետևությունները կարող են նպաստել հետազոտության թեմայի վերաբերյալ տեսական պատկերացումների ընդլայմանը և հանդիսանալ տեսական աղբյուր՝ հետագա նմանատիպ աշխատանքների մշակման համար: Աշխատանքը գրված է բարձր լեզվառճական եղանակով և իրավաբանական եզրաբանության պահանջներին համապատասխան:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Ընդհանուր առմամբ, դրական գնահատելով կատարված աշխատանքը, այնուհանդերձ ունենք որոշակի նկատառումներ, որոնք արտահայտվում են հետևյալում.

առաջին, գտնում ենք, որ գրախոսվող աշխատանքը բովանդակային առումով կշահեր, եթե հեղինակը իրավահամեմետական վերլուծության ենթարկեր նաև

աշխարհի դաշնային պետություններում նմանատիպ հիմնախնդիրների հետ կապված վերլուծության առումով.

երկրորդ, աշխատանքի արդյունքները առավել օբյեկտիվ և արժանահավատ կներկայանային, եթե հեղինակը իր տեսական հետևություններն և եզրակացություններն ամրապնդեիր կոնկրետ փաստական օրինակներով:

Սակայն նշված նկատառումները, գտնում ենք, որպես մասնավոր դիտողություններ, որոնք բնավ չեն կարող ազդել կատարված աշխատանքի դրական արժանիքների վրա: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՌԴ ԲՈՀ-ի կողմից հաստատված գիտական հետազոտությունների համար ընդունելի պարբերականներում զետեղված են հեղինակի յոթ գիտական հոդվածները, որոնցում արտացոլված են ատենախոսության հիմանական դրույթները: Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի 2020թ. դեկտեմբերի 29-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ՝ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ.Սաֆարյանը, ավագ գիտաշխատողներ, իրավագիտության թեկնածուներ՝ Լ.Ա.Ղազանչյանը, Ա.Վ. Շուքուրյանը, Ա.Ա.Աբրահամյանը, Բ.Վ.Ղազինյանը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք որ Մախով Ալիմ Ռուսլանի <<Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների ղեկավարների սահմանադրաիրավական պատասխանատվությունը>> թեմայով թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական և ավարտուն հետազոտական աշխաատանք է, որը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Կանոնակարգ»-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ.Ստեփանյան